ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Փամբակ համայնքի հարգելի՛ բնակիչներ, 1991 թվականին անկախության հռչակումից հետո Հայաստանի Հանրապետությունը ձեռք բերեց իր անկախ պետականության խորհրդանիշը՝ 1995-ի հուլիսի 5-ին վավերացվելով ՀՀ Սահմանադրությունը:

Այս իրողությունը դարձավ Հայաստանի Հանրապետության, որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության հիմքը՝ ամրագրելով, որ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է միմիայն ժողովրդին:

Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է, և մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունն էլ ընկած է մեր ամենօրյա աշխատանքային օրակարգում:

Փամբակ համայնքի սիրելի՛ բնակիչներ, շնորհավորում եմ բոլորիս՝ մեր Հայրենիքի և պետականության համար այս կարևորագույն օրվա առթիվ: Ցանկանում եմ, որ յուրաքանչյուրիս, որպես արժանապատիվ քաղաքացու գիտակցության մեջ ձևավորվի այն գաղափարը, որ Մայր օրենքից ցանկացած շեղում հավասարազոր է հանցագործության, քանզի այն անկախ պետականության պահպանման և յուրաքանչյուր քաղաքացու ազատության, իրավունքների, ապահովության կարևորագույն երաշխիքն է:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան